ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 ապրիլի 2019թ. թիվ 148-Ա

Դ. ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ
ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 4)-րդ ենթակետի, 113-րդ հոդվածի 1-ին մասի 9)-րդ ենթակետի և 130-րդ հոդվածի, հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժնի պետի զեկուցագիրը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալի օգնական Դավիթ Սամվելի Խաչատրյանին 2019թ. ապրիլի 2-ից ազատել զբաղեցրած պաշտոնից և լուծել նրա հետ 2018 թվականի հոկտեմբերի 24-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. Լոռու մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին՝

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Դավիթ Խաչատրյանի հետ կատարել վերջնահաշվարկ:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի քարտուղարության պետին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով սույն որոշումը եռօրյա ժամկետում հանձնել Դ.Խաչատրյանին պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. ապրիլի 2
ք.Վանաձոր